

Հաստատված է՝

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
լեզվահասարակագիտական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

25.03.2019 թ. № 10 նիստի որոշմամբ

ԵՊԼՀ ղեկավար, գիտական խորհրդի նախագահ՝

Վ. Վ. Հարությունյան



**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**«ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ԲԱՆՔԵՐ» ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ  
ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԼՀ) «Բանբեր» գիտական պարբերականի հրատարակման կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) կարգավորում է ԵՊԼՀ «Բանբեր» պարբերական գիտական ամսագրի (այսուհետ՝ «Բանբեր») հրատարակման գործընթացը և այդ ընթացքում ծագած իրավահարաբերությունները:
2. Կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ է իրականացնում ԵՊԼՀ-ի գիտական խորհուրդը:
3. Կանոնակարգի համար իրավական հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, ԵՊԼՀ-ի և ԵՊԼՀ-ի գիտության բաժնի կանոնադրությունները:
4. «Բանբերում» հրատարակվող գիտական հոդվածներին ներկայացվող պահանջները մշակում է «Բանբերի» գլխավոր խմբագիրը (այսուհետ՝ Խմբագիր) և հաստատվում ԵՊԼՀ-ի գիտական խորհրդում:
5. «Բանբերին» ներկայացվող պահանջների համար հիմք է հանդիսանում ՀՀ Կրթության և գիտության նախարարության Բարձրագույն որակավորման կոմիտեի՝

2018թ. դեկտեմբերի 28-ի «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակություններին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N86-Ա հրամանը:

6. «Բանբերը» հրատարակվում է ԵՊԼՀ-ի կողմից՝ իր միջոցների հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## **II. ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԽՄԲԱԳՐՄԱՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀԱՆՁՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ**

7. «Բանբերի» հերթական համարը հրատարակելու և հեղինակներից դիմումներ ընդունելու մասին հայտարարությունը Խմբագրի անունից տեղադրվում է «Բանբերի» և ԵՊԼՀ-ի պաշտոնական էլեկտրոնային կայքէջերում:
8. «Բանբերի» հերթական համարը հրատարակելու և հեղինակներից դիմումներ ընդունելու մասին հայտարարությունում նշվում է գիտական հոդվածը Խմբագրին ներկայացնելու հստակ ժամկետ՝ պայմանավորված «Բանբերի» հրատարակման ժամանակացույցով:
9. Գիտական հոդվածի հեղինակի (այսուհետ՝ Հեղինակ) դիմումի ձևաչափը մշակվում է Խմբագրի կողմից և հաստատվում ԵՊԼՀ-ի գիտության բաժնին կից գործող Խմբագրական-հրատարակչական խորհրդում:
10. «Բանբերում» հրատարակվող գիտական հոդվածներին ներկայացվող պահանջների հետ Հեղինակի համաձայնությունը պարտադիր ներառվում է Հեղինակի դիմումում:
11. «Բանբերում» հրատարակվող գիտական հոդվածներին ներկայացվող պահանջները տեղադրվում են «Բանբերի» և ԵՊԼՀ-ի կայքէջերում, ինչպես նաև զետեղվում են «Բանբերի» յուրաքանչյուր համարում:
12. «Բանբերում» գիտական հոդված հրատարակելու մասին դիմումը (այսուհետ՝ Դիմում) և գիտական հոդվածը թղթային և էլեկտրոնային տարբերակով սահմանված ժամկետում ներկայացվում է Խմբագրին:
13. Դիմումի հետ հեղինակը պարտավոր է ըստ սահմանված ձևաչափի ներկայացնել գիտական հոդվածի վերաբերյալ մասնագիտական գրախոսություն, որը պետք է

տրված լինի գիտությունների թեկնածուի կամ դոկտորի աստիճան ունեցող համապատասխան մասնագետի կողմից: Առանձին դեպքերում՝ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան մասնագետների բացակայության պարագայում ներկայացվում է Հոդվածի վերաբերյալ ամբիոնի կամ գիտաուսումնական կենտրոնի (այսուհետ՝ ԳՈՒԿ)՝ Հոդվածի վերաբերյալ եզրակացությունը:

14. Ասպիրանտը կամ հայցորդը պետք է նաև լրացուցիչ ներկայացնի իր կամ համապատասխան ամբիոնի կամ ԳՈՒԿ-ի գրավոր երաշխավորությունը:
15. Հեղինակի դիմումը, էլեկտրոնային և թղթային տարբերակներով գիտական հոդվածը, պահանջվող այլ փաստաթղթերը ընդունվում են Խմբագրի կողմից:
16. Պահանջներին համապատասխանող գիտական հոդվածը Խմբագիրը տրամադրում է տվյալ համարի պատասխանատու խմբագրին:
17. Հոդվածը հրատարակելու համար սահմանված վճարը հեղինակը փոխանցում է ԵՊԼՀ-ի հաշվին:
18. «Բանբերի» հերթական համարի էջադրված տարբերակը պատասխանատու խմբագիրը հանձնում է Խմբագրին՝ ներկայացնելով մերժված հոդվածների մասին գրավոր հաշվետվություն:
19. Այն գիտական հոդվածը, որը չի համապատասխանում «Բանբերում» հրատարակվող գիտական հոդվածներին ներկայացվող պահանջներին՝ ուղարկվում է հեղինակին՝ լրամշակելու, կամ մերժվում է՝ առանց նախապես գրախոսվելու:
20. Մերժված գիտական հոդվածների հետ կապված նյութերը՝ դիմումը, գիտական հոդվածը, հարակից այլ փաստաթղթերը հեղինակին չեն վերադարձվում:
21. Հրատարակության համար երաշխավորված, ինչպես նաև մերժված առանձին հոդվածներ Խմբագրի որոշմամբ կարող են ուղարկվել համապատասխան գիտական կազմակերպություն կամ մասնագետին լրացուցիչ մասնագիտական եզրակացություն ստանալու համար:
22. «Բանբերի» հերթական համարը հրատարակելու մասին որոշումը Խմբագիրը ընդունում է միանձնյա՝ իր պատասխանատվությամբ և ներկայացնում է ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի երաշխավորման: